

յառաջ քան զմեկնեւն ի քաղաք կախեալ է անդ վարադոյր կամ կտաւ մի թրջեալ, արդեւ լինի այն բոցոյն ծաւալման, եւ ջուր ջրհոսիցն ի վերուստ իջեալ խափանեալ է զհուրն. այլ վտանդն ի մաշկոխն հասեալ էր, եւ վայ էր եթէ սակաւ մի եւս յառաջեալ էր եւ հազորդեալ ի յարակից մասունս տպագրատան:

Ոչ կարեմք հաշուել տակաւին զկորուստ մեր, այլ մի թիթարիմք զերծելովքն, որք են ողջոյն Վարժարանն եւ Եղբարց սրահն, դրատունք եւ եկեղեցի եւ սեղանատուն եւ տպագրատուն եւ ամենայն ներքնայարկն, բացի ի միոյ մեծ ծակէ զոր բացեալ է փլած մասին միոյ լայն սրահի նորընծայատան:

Բայց ես ըստ ոչ կամացս եւ ըստ կարծեաց երկարեցի զգրուածս. թէպէտ գիտեմ զի հեռաւորաց փափաքելի է լսել եւ իմանալ յերկարագոյնս եւս, զոր թողում այլոց ոճով գրել եւ ոչ հապճեպով որով ձարուեմս, իջեալ արդ իսկ ի վերնայարկէ նորընծայարանի, որ ոչ այլ ինչ է բայց դարաս մի հարթ հաւասար ծովահայեաց, այլ առ ի դնալ յայլ եւ այլ կողմանս վանացս հարկ է երբեմն անցանել ընդ պարտէզ, եւ երբեմն ընդ անձեղուն յարկօք կասկածանօք հարուածոյ ի վերուստ. այլ երկայնութիւն ցերեկի եւ կանուխ սկիզբն առնել զործաւորաց՝ յուսացուցանէ ի սակաւ աւուրս ծածկել եւ գոնեայ ապահովել զգլուխս մեր:

Ողջ լեր, ողջունելով զեղբարս եւ զկարեկիցս մեր.

Հոգեկից Եղբայր

Հ. ՂԵՒՈՆԴ Մ. ԱԼԻՇԱՆ

Ո. Կ.

ՍԵՒԱՆԷՆ Ս. ՂԱԶԱՐ

(Շար. տե'ս «Բազմավէպ» 1976, ք. 1-2, էջ 198-205)

ԵՐԿԻՆՔ ԱՄՍԵՆ

ԵՐԿԻՆՔԸ

Որքան կապոյտ այնքան ջինջ,
Երկինք մ'ունի այս կղզին.
Այնքան նրման վըրանին
Արքայական դարպասին:

Ներկայ է նա ամէնուր,
Անհրապելի տարածուն.
Մե'րն է միայն եւ մեր տունն
Մինչեւ հրպած ծառերուն:

Ո՛րքան ուրախ կը սահին
Թիթեռնիկներ ու թռչնակ,
Կապոյտն իրենց թեւին տակ,
Կապոյտն իրենց թիկունքին:

Այս երկինքն է որ կու տայ
Ամբլճութիւն աչքերուն,
Ծաղիկներուն հազար գոյն,
Ձանդակի ձայնն արծաթեայ:

Ո՛րքան կ'ըղձամ ես անցնիլ
Պարունակէ պարունակ,
Ըլլալ արեւ կամ լուսնակ,
Նոր սաւառնորդ մը կոչուիլ:

Այստեղ ոչինչ կը թըւի
Հըպարտութիւնը մարդուն,
Ես ո՛չ չող եմ առկայծուն,
Որ կաթիլ մ'է անձրեւի:

Կ'անցնին հիմա երկաթներ,
Մոլորակէ մոլորակ,
Սակայն չունին յիշատակ,
Պարապուծիւն է համակ:

Մեր տանիքէն քիչ մը վեր
Չեմ երազեր այլ աշխարհ:
Չեմ փնտռեր դէմք, գաղափար
Եւ առինքնող մեծ աչքեր:

ԱՐԵՒՄԱՐԸ

Ոտքի յուշիկ մատներով,
Ինչպէս ոգի լուսաւոր,
Շողը կու դայ շողին քով,
Երեկոյեան դէմ աղուոր:

Ձեռք մը, բոսոր կը ներկէ
Հորիզոններ հեռաւոր.
Արեւելեան հինայ է
Կամ ծիրանի ծոպաւոր:

Հրդեհ մը կայ ամէնուր,
Երեւոյթ է եւ չ'այրիւր.
Լիճն աւազան ոսկեթոյր,
Ուր կը լողան կոնտուրներ:

Արփին դանդաղ կը հակի
Համայնական ժըպիտով.
Շողերն առանց թըռիչքի
Կը հեռանան պարելով:

Գոյն է ամէն բան հիմա,
Եւ աչքերու քաղցրութիւն,
Աներեւոյթ ձեռք մը կայ,
Որ ձեւ կու տայ իրերուն:

Նստիլ ծառի մը բունին,
Ու լուռ դիտել հորիզոն,
Կ'ընդարձակուի եւ հողին
Տեսիլքի հետ երկնային:

Ձանդակներու երգ մը կայ
Կապոյտին մէջ դէմ առ դէմ,
Վենետիկն է որ կը զգայ
Աղօթելու փափաք ջերմ:

Դէմքերն հիմա մարդկային,
Ե՛ւ բարի են ե՛ւ խոկուն.
Աչքերն իրար կը նային
Ուր կայ լոյսի քաղցրութիւն:

Երազի մէջ է կղզին
Գեղեցկութեամբն իրիկուան.
Արդ ճաճանչներ կը թառին
Տանիքներու բարձրութեան:

Արփին հիմա կը ժողվէ
Մատներն իր բիւր ցիրուցան.
Մութը թեւն իր կ'երկարէ,
Պարփակելու ամէն բան:

Բայց իմ աչքերս տակաւին,
Ձեն բաժնուիր երկինքէն,
Վերջին շողերն արեւի
Տրտմութեան պէս քաղցըր են:

ԵՐԵՎԱՆԻ...

Ամէն երեկոյ պարիսպին վըրայ
Սիւրբա կը դնեմ,
Սիւրբա ծիրանի արեւ կը դառնայ.
Աչքերուս դէմ
Երկինքն է անհուն,
Լըճակն ոսկեգոյն.
Երեկոյ է...

Տոթերու քաղաքն, հսկայ նունուֆար,
Ծովէն դուրս կ'ելլէ,
Մարմինը ճերմակ, մարմինը մարմար
Արդէն հըրաշք է.
Իր գլխուն վըրայ
Արփին կ'երերայ,
Երեկոյ է...

Լըճակը կարծես ցորենի արտ է,
Հովէն տարուբեր.
Քաղեմ ձեռքերովս, բայց լոյծ ալիք է.
Երազ անըստուեր,
Երազ է չորս դին
Ցուքն համբոյր ցուքին.
Երեկոյ է...

Ի՛նչ հեշտ երեկոյ, առանց սահմանի,
Լըճին մէջ արփին,
Կոյսի մը նըման հանդարտ կը հանգչի.
Սըփռած ծիրանին,
Ծիրանին կարմիր
Եզերքն ոսկեծիր,
Երեկոյ է...

Հողիս ափէ ափ լուռ կը թափառի,
Աչքերըս նաւակ.
Ա՛խ, աննիւթական կարապ ըլլայի
Ջըրանոյ՛ ճերմակ.
Ծովեր անցնէի,
Դէմն արեւմուտքի
Նոր աստղ ըլլայի.
Երեկոյ է...

Պարզ երեկոյ, խօսքերը մեղմիկ,
Բընութիւնն արդար,
Ամէն բան հէքեաթ, ամէն տենչ գաղտնիք,
Ինչպէս հին աշխարհ,
Սիրոյ ժամերուն,
Ինչպէս քաղցրութիւն.
Երեկոյ է...

ԼՈՒՍՆԱԿ ԳԻՇԵՐՈՎ

Լուսնակ գիշերով կղզին՝ կը փոխուի
Արծաթէ ափսէ.
Շողեր կը թափին, նըման անձրեւի
Լուսնակ գիշերով:

Թող իջնեն վըրաս լուռ մենակութիւն.
Եւ լոյսեր խաղաղ.
Կը խորհիմ անհունն, անհունն եմ արդէն
Լուսնակ գիշերով:

Բայց որքան աստղեր կան այս լճին մէջ,
Կարմիր ցուք ունին,
Օտարական են ծովէ ծով ինկած
Լուսնակ գիշերով:

Կը ննջէ աշխարհս, կը ննջեն մարդիկ,
Վերմակն է արծաթ.
Ծղրիթը կ'երգէ նոճի մէջէն,
Լուսնակ գիշերով:

Աչքերուս մէջն ալ կա՛յ լուսնակ գիշեր,
Աստղեր կան շողշող,
Ո՛հ, կարենայի գրկել սիրաջեր
Լուսնակն համբոյրով
Լուսնակ գիշերով:

ԳԻՇԵՐԻ

Կ'երթամ երազով մինչեւ հորիզոն,
Բաղուկներս կարկառ դէպի անծանօթ.
Հողիս աւելի թոցալառ կերոն.
Կը ծաղի իմ մէջն ուրիշ առաւօտ:

Հիմա ես կ'ապրիմ լոկ ինծի համար.
Խորհուրդներս անեղր՝ ես փոքրիկ եմ.
Աստղերն են քերթուած, երկինքը կաճառ,
Լալու, երգելու ես կը դգամ փափաք:

Շատ ունիմ ես հին ու շատ նոր յուշեր,
իմ հին օրերէս կու գան խօսելու.
Որքան մոռցըւած ու բարի դէմքեր
Որ ես յանձնեցի նետուած քարերու:

Երանի՛ր անոնց որ հետն արեւի,
Սիրեցին ընկերն ու լոյս բաշխեցին.
Վատ մա՛րդը միայն հանգիստ խիղճ չունի
Եւ կը հալածէ սատանն իր հոգին:

Կը ննջեն հիմա երկինք եւ երկիր,
Հաւքեր կը ննջեն կըտուցներ թեւին.
Կը լսուի միայն ալիքը լըճին,
— Օրօ՛ր, Սուրբ Ղազար, օրօ՛ր քու կեանքին:

Ի՛նչ լսաղաղ գիշեր, ի՛նչ սուրբ լըռութիւն.
Խորհուրդներու մէջ հոգիս կ'ընկղմի.
Չունիմ թանձր միս, աչքերս աստղերուն,
Կարծես աստուած եմ որ մարմին չունի:

ԱՐՇԱԼՈՅՍԸ

Արշալոյսն այստեղ ծովերէն կու գայ,
Ծովերու վըրայ պարող դիցուհի.
Աչքէ աչք կ'անցնի, արեւ կը դառնայ,
Ինչպէս երազներն արթնցող կոյսի:

Ամէն օր տարբեր հանդերձանք ունի,
Ոսկի, ծիրանի, եղերքներն արծաթ.
Չեմ գիտեր թէ ո՛ր հըպարտ թագուհի,
Այսքան անմարմին փերի կը փոխուի:

Ծառերուն վըրայ կը թափէ գոհար,
Կը ներկէ որմերն ոսկի թերթերով.
Հաւքերն այդ ժամուն կը կանչեն գիրար,
Կ'անցնի թեթեւ լոյսն իրենց թեւերով:

Ու բարեւ կու տան մարդիկ իրարու.
Բարեւը կեանք է եւ երջանկութիւն.
Այդ պահն է անոյ՜լ կեանքը սիրելու,
Բախտը միշտ կու գայ վաղ առաւօտուն:

Երանի՛ր ի՛նձ ալ դար արշալոյսին,
Իմ սրտիս ուզած բարիքներն ու սէր.
Շիրիմս ալ քարէ կը դառնար լոյսին,
Ինչպէս Յիսուսի յարութեան օրն էր:

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ